

պէտքն է ազատութիւնը: Միթէ հիւանդանոցից դուրս գալուց յետոյ ստիպուած չեմ լինելու գողութեամբ պարագելու: Շատ էլ նախանձելի բան չէ սովորման լինելու ազատութիւնը:

Դիւ վալը ազատում է նրան առանց որ և է պայմանի, բայց հնարաւորութիւն է տալիս նրան ապրել ազնիւ աշխատանքով: Եւ այդ «գողը» դառնում է նրա անձնուէր բարեկամը և զոհում է կեանքը հրդեհից փրկելու համար մի պատկեր, որ թանկագին էր Դիւ վալի համար:

Ինչպէս տեսնում էք, Խիրամի պատմութեամբ մէլօգրամատիկական բնութեութիւն է կրում և մի քիչ միաժամ լուծումով է վերջանում, բայց նա զուրկ չէ զրական արժանաւորութիւններից: Դժբախտաբար թարգմանութիւնը անաշուղ է. Յ. Փ. և Մ. Շ. «ազատ» են անուանել իրանց թարգմանութիւնը, կարծելով, թէ այդ բանը իրաւունք է տալիս իրանց ազաւազելու հեղինակի գրածը և կրճատելու իրանց չը հասկացած կամ դժուար թարգմանելի տեղերը (օրինակ, վերև բերած կտորից մի բնորոշ պարբերութիւն է կրճատուած):

Երբ որ Онъ говоритъ безъ малѣйшаго озлобленія թարգմանում են «նա խօսում էր առանց քաշուելու», — այդ կը նշանակի ոչ թէ այն, որ «ազատ» են թարգմանում, այլ որ աղաւաղում են գրուածքը: Իսկ երբ Онъ откинулся на спину, закрывъ глаза, съ висѣвшей плетью сломанной рукой թարգմանում են՝ «նա մէջքը թեք տուեց աթոռին, ծածկելով աչքերը մտրակի նման կախ ընկած ձեռքով», — այդ կը նշանակի թարգմանել՝ առանց հասկանալու:

Տ. Յ.

Willam Watson. «Խիրամի արեւելքը». թարգմ. անգլ. Խոսրով, 30 եր. գինը 50 սան. Պարիզ, 1903:

Խիրամի Արեւելքին, արիւննաներկ Թիւրքահայաստանին են նուիրուած Ուիլլիամ Ուատսոնի այն ոտանաւորները, որ պ. Խոսրով թարգմանել է անգլիերէնից:

Չը կան անարատ, իդէալական մարդիկ, ևս առուել չը կան անարատ, իդէալական ազգեր, քանի որ միջազգային բարոյականութիւնը աւելի ստոր է քան անհատական բարոյականութիւնը, բայց չը կայ մի ազգ, որի զաւակները այնքան համարձակութեամբ, այնքան արիւարար նշաւակէին իրանց ազգի դորձած յանցանքները, որքան անգլիական ազգը: Անգլիական ազգի մեծութեան ամենախոշոր ապացոյցներից մէկն է այդ:

Ուխիլիամ Ուատսընի ոտանաւորները, որոնց մէջ նա ողորում է հայկական կոտորածները և պաշտօնական Անգլիայի անտարբերութիւնը դէպի այդ չը տեսնուած աղէտները, անգլիական մեծահոգի և ազատասէր ժողովրդի խղճմտանքի արձագանքներն են, որոնք ոչ ոքի համար այնքան հետաքրքիր չեն կարող լինել, որքան մեզ համար:

Դժբախտաբար, թարգմանութիւնը անաջող է: Թարգմանիչը, ինչպէս երևում է, կուրօրէն պահպանել է ընագրի նախադասութիւնների կազմը, նոյն-իսկ բառերի հետևողութիւնը, և դրա չնորհիւ ոտանաւորը դարձել է ոչ միայն անբանաստեղծական, այլ և գրեթէ անհասկանալի:

Տ. Յ.

Ն Ո Ր Ս Տ Ա Յ Ո Ւ Ա Մ Գ Ր Ք Ե Ր

- 1) Բժ. Ն. Տէր-Իսահակեան «Դիֆտերիա», Ալեքսանդրօպօլ, 1902, գինն է 5 կոպ.:
- 2) Գ. Սունդուկեանց՝ «Էլի մէկ զոհ», Կօմեղիա հինգ արարուածով, Երկր. տպագր., Թիֆլիս, 1902 թ., գինն է 1 ռ.:
- 3) «Հանդէս Հայագիտութեան», խմբագրութեամբ Ֆրանց Ֆրանկի, I հատոր, Երրորդ տետր., Մարբուրգ:
- 4) Կ. Մէլքե-Շահնազարեանց՝ «Վազի մշակութիւնը», պատկերազարդ, հրատարակութիւն Մ. Արամեանցի, Թիֆլիս, 1902 թ., գինն է 1 ռ.:
- 5) Գեօթէ՝ «Ստիլլա», ողբերգութիւն հինգ գործողութեամբ, գերմ. Գէորգ Ալթուսեան, Վաղարշապատ, 1902 թ., գինն է 20 կոպ.: